https://doi.org/10.46991/SL/2023.97.070

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մարտին Խաչիկյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
«ԲԻ ԷԼ ՍԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ավագ իրավաբան, փաստաբան

Ներածություն

Սույն հոդվածում քննարկվում է ՀՀ օրենսդրությամբ չբացահայտված՝ «իրավունքի չարաշահում» եզրույթը: Ներկայումս սուբյեկտների վարքագծում իրավունքի չարաշահման փաստը բացահայտելու համար անհրաժեշտ վավերապայմանների սահմանումը յուրաքանչյուր դեպքի համար դատարանների հայեցողությունն է:

Սույն հետազոտության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման համակարգային ուսումնասիրության և վերլուծության արդյունքում բացահայտել կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումը բնութագրող չափանիշները: Նշված նպատակին հասնելու համար խնդիր է դրվել՝

- ուսումնասիրել «իրավունքի չարաշահում» եզրույթի ձևավորման և դրա զարգացման պատմությունը ինչպես ՀՀ-ում, այնպես էլ այլ երկրներում,
- վեր հանել կորպորատիվ իրավահարաբերություններում «իրավունքի չարաշահում» եզրույթի էությունը և դրա առանձնահատկությունները,
- վերլուծել դատական պրակտիկայում իրավունքի չարաշահման դեպքերի բացահայտման առանձնահատկությունները,
- սահմանել կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումը բնութագրող հատկանիշները:

Աշխատանքում, պայմանավորված հետազոտման նպատակներով և խնդիրներով, կիրառվել են ընդհանուր և հատուկ մեթոդներ, մասնավորապես՝ անալիզ, սինթեզ, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլ մեթոդները:

Կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման ընդհանուր բնութագիրը

Ժամանակակից իրավաբան-տեսաբանները ավելի հաճախ են սկսել քննարկման առարկա դարձնել քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների սուբյեկտիվ իրավունքները և դրա իրականացման առանձնահատկությունները:

Քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կողմից իրենց սուբյեկտիվ իրավունքների իրականացումը կարելի է բնորոշել որպես գործողությունների, անգործության և/կամ այլ վարքագծի դրսևորում, որը նախատեսված է օրենքներով, պայմանագրերով և/կամ այլ պարտավորությունների ուժով: Քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների միջև իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերի գերակշիռ մասը ունի «իրավունք վերապահող» բնույթ, սակայն, բացի այդ, գոյություն ունեն նաև «արգելող» բնույթի իրավանորմեր:

Նշվածի վերլուծությունից բխում է, որ սուբյեկտիվ իրավունքը օրենսդրի կողմից ցանկալի և թույլատրելի վարքագիծն է, որպիսի իրավունքների բովանդակութ-

յունը շարունակ կատարելագործվում է՝ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորելու նպատակով: Միաժամանակ, սուբյեկտիվ իրավունքների սահմանափակումը ստատիկ չէ, այլ հակառակը՝ պարբերաբար փոփոխությունների ադրյունքում շուտ արձագանքում է այլ իրավանորմերով նախատեսված փոփոխություններին, տեխնոլոգիական առաջընթացներին և օբյեկտիվ իրականությունում տեղի ունեցող այլ փոփոխություններին: Օրենսդրի կողմից սուբյեկտիվ իրավունքների շարունակական բարելավման գործընթացը նպատակ ունի ոչ միայն նոր կարգավորումներ ներդնելու, այլ նաև եղած իրավադրույթներին էլ ավելի որոշակիություն տալու, ինչպես նաև փաստացի կիրարկման ոչ իր նպատակին ծառայելու դեպքերը կանխելու:

Ընդ որում, այդ իրավունքների իրականացման ընթացքում համապատասխան իրավահարաբերությունների սուբյեկտները ազատ են, իսկ օրենսդրի կողմից այդ իրավունքների իրականացումը սահմանափակվում է միայն այն դեպքերում, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

2. Քաղաքացիների և իրավաբանական անձանց հրաժարվելն իրենց իրավունքներն իրականացնելուց չի հանգեցնում այդ իրավունքների դադարման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»1:

ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 28-ին կայացրած թիվ ՍԴՈ 980 որոշման համաձայն՝

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածը վերաբերում է քաղաքացիական իրավունքները սեփական հայեցողությամբ իրականացնելու իրավական հնարավորությանը: Այս կապակցությամբ, հաշվի առնելով այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, հասարակական հարաբերությունների կայունության ապահովման անհրաժեշտությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավունքների իրականացման հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը, վտանգի տակ դրվի հասարակական հարաբերությունների կայունությունը: Հետևաբար՝ իրավունքների իրականացման հայեցողությունը չի ենթադրում իրավունքների չկարգավորված, անկանոն իրականացում: Այն ենթադրում է տվյալ իրավունքն իրականացնելու կամ չիրականացնելու իրավական հնարավորությունների միջև ընտրություն կատարելու իրավունք, որի իրականացումը կարող է տեղի ունենալ բացառապես օրենքով սահմանված կարգի շրջանակներում: Ընդհակառակը, իրավունքների՝ օրենքով սահմանված կարգից դուրս ցանկացած իրականացման հնարավորություն կխաթարի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը՝ միաժամանակ վտանգի տակ դնելով հասարակական հարաբերությունների կայունությունը»2:

Ըստ Տ. Կ. Բարսեղյանի՝ «Քաղաքացիական իրավունքների իրականացումը տարբեր գործողությունների համակցություն է, որոշակի գործընթաց, որի ընթացքում կոնկրետ սուբյեկտիվ իրավունքի կրողները ստանում են այդ իրավունքներին համապատասխանող տարբեր իրական արդյունքներ (բարիքներ, սոցիալական

---

[1] ՀՀՊՏ 1998.08.10/17(50): Այսուհետ՝ Օրենսգիրք:

[2] ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 28-ին կայացրած թիվ ՍԴՈ 980 որոշում:

արժեքներ, պահանջմունքների բավարարում): Քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում են իրենց կամքով, ի շահ իրենց և սեփական հայեցողությամբ: Այսինքն սուբյեկտիվ իրավունքների իրականացման հետ կապված բոլոր հարցերը, այդ թվում սուբյեկտիվ իրավունքների իրականացումից հրաժարվելու, դրանք այլ անձանց փոխանցելու հարցերն իրավունքի սուբյեկտները լուծում են սեփական հայեցությամբ, սեփական շահերից ելնելով»[1]:

Այսպիսով, ստացվում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքներ են ձեռք բերում և իրականացնում իրենց հայեցողությամբ, որն էլ բխումը է իրավական համակարգերում կամքի ինքնավարության սկզբունքից: Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցներին տրված ազատության սկզբունքի էությունը այն է, որ նրանք ազատ են՝ պաշտպանելու իրենց իրավունքները իրենց շահերին և նախասիրություններին համապատասխան:

Ընդ որում, կամքի ազատության սկզբունքը տարածվում է ոչ միայն իրավունքների ձեռքբերման և իրականացման վրա, այլ նաև իրավունքների իրացումից հրաժարվելու որոշումների վրա:

Այնուամենայնիվ, քաղաքացիական իրավունքների իրականացումը չի կարող լինել անսահմանափակ, ինչով պայմանավորված՝ իրավունքների իրականացման վրա տարածվում են որոշակի սահմանափակումներ, քանի որ քաղաքացիական իրավունքների իրականացման սկզբունքները պետք է պահպանվեն քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակից հանդիսացող այլ սուբյեկտների կողմից, մասնավորապես՝

«1. Իրավունքների իրականացումը չպետք է խախտի այլ սուբյեկտների՝ օրենքով պահպանվող իրավունքները:

2. Իրավունքներ իրականացնելիս պետք պահպանվեն ձևավորված բարքերը և գործարար շրջանառության սովորույթները:

3. Իրավունքները պետք է իրականացնել դրանց նշանակությանը համապատասխան»[2]:

Նշվածից կարելի է ենթադրել, որ իրավական գրականության մեջ քաղաքացիական իրավունքների իրականացման հնարավորությունը բացարձակ չէ և որոշ դեպքերում անուղղակի և/կամ ուղղակի ենթարկվում է սահմանափակումների, որը կարելի է բնորոշել որպես քաղաքացիաիրավական իրավունքների իրականացման սահմաններ:

Քաղաքացիական իրավունքների իրականացման սահմանները իրավական համակարգերի անբաժանելի բաղադրիչներ են, քանի որ դրանք ուղղված են իրավահարաբերություններում հավասարակշռություն մցնելուն:

Սահմանափակումները կարող են ունենալ տարբեր ձևեր, ներառյալ իրավական սահմանափակումները, ընթացակարգային և էթիկական, սակայն յուրաքանչյուր տեսակի սահմանափակում ուղղված է նրան, որ իրավունքները իրացվեն դրա նպատակին համապատասխան:

Օրենսդիրը, կանխորոշելով քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից իրենց իրավունքների իրականացման հնարավոր չարաշահումները, Օրենսգրքով հստակեցրել է իրավունքների իրականացման սահմանները՝ կանխելով քաղաքացիաիրավական հարաբերություններում դրա մասնակիցների կողմից հնարավոր սահմանազանցման դեպքերը:

---

[1] **Բարսեղյան Տ. Կ.** ՀՀ քաղաքացիական իրավունք: Առաջին մաս (չորրորդ հրատարակություն) – Երևանի պետ. համալս.-Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2014, էջ 78-79:

[2] ՀՀ քաղաքացիական իրավունք: Ընդհանուր մաս: Սխեմաներ/ **Շ. Ղուկասյան և ուրիշ**.- Եր.: «Հայրապետ» հրատ., 2023, էջ 46

Մասնավորապես՝ Օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում:

Մրցակցության սահմանափակման նպատակներով քաղաքացիական իրավունքներն օգտագործել, ինչպես նաև շուկայում գերիշխող դրությունը չարաշահել չի թույլատրվում:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պահանջները չպահպանելու դեպքում դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը կարող է մերժել անձին նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում»:

Քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների իրականացման սահմանների հստակեցումը վկայում է անձանց իրավունքների իրականացման ընթացքում այլ անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության մասին՝ այն համատեքստում, որ իրավունքների տրամադրումը ուղղված է հասարակական կարգի կայունության ապահովմանը, այլ ոչ թե իրավասու անձանց շահերի պաշտպանությանը:

Ըստ Վ. Պ. Գրիբանովայի՝ «Իրավունքի իրականացման սահմաններում գործելը քաղաքացիական իրավունակության շրջանակներից դուրս չգալն է, իրավունքների իրականացման համար նախատեսված ժամկետներում իրավունքների իրականացումն է, իրավունքների իրականացումն է դրա նշանակությանը համապատասխան, իրավունքների իրականացման ձևերից չշեղվելն է և սահմանված դեպքերում հարկադրված իրավունքների իրականցումն է»[1]:

Մեկ այլ իրավաբան գիտնականի կարծիքով՝ «իրավունքների իրականացման սահմաններից դուրս գալը իրենից ենթադրում է իրավունքի չարաշահում, իսկ ոմանք կարծում են, որ իրավունքի չարաշահումը և իրավունքների իրականացման սահմաններից դուրս վարքագիծ դրսևորելը տարբերվում են իրարից, քանի որ իրավունքների իրականացման սահմաններից դուրս վարքագիծ դրսևորելու արդյունքում որոշ դեպքերում առաջացնում է իրավունքի չարաշահմանը ոչ բնորոշ ինքնուրույն իրավախախտում»[2]:

Գերմանացի իրավաբան գիտնականների կարծիքով՝ օրենքի սահմանները անցնելը տարբերվում է իրավունքի չարաշահումից: Նրանց համոզմամբ՝ հիմնական տարբերակիչ հատկանիշը վարքագծի արտաքին կողմն է, որը դրսևորում են քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտները: «Իրավունքների իրականացման սահմանները խախտելը հանգեցնում է իրավական փաստերի առաջացման, քանի որ համապատասխան իրավահարաբերությունների սուբյեկտները պատկերացնում են, որ իրենք գործում են օրենքին համապատասխան, որի արդ-

---

[1] **Грибанов В. П.** осуществления и защиты гражданских прав. М., 2001, էջ 29 (file:///C:/Users/Martin%20Khachikyan/Downloads/gribanov_vp_osushchestvlenie_i_zashchita_grazhdanskih_prav.pdf էլեկտրոնային հասանելիությունը 17.11.2023թ. դրությամբ)

[2] **Сазанова, И. В.** Злоупотребление субъективным гражданским правом: монография / – Южно-Сахалинск: СахГУ, 2009. էջ 30 (chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/http://sakhgu.ru/wp-content/uploads/page/record_85100/2019_04/%D0%A1%D0%B0%D0%B7%D0%B0%D0%BD%D0%BE%D0%B2%D0%B0-%D0%98.-%D0%92.-%D0%97%D0%BB%D0%BE%D1%83%D0%BF%D0%BE%D1%82%D1%80%D0%B5%D0%B1%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5-%D1%81%D1%83%D0%B1%D1%8A%D0%B5%D0%BA%D1%82%D0%B8%D0%B2%D0%BD%D1%8B%D0%BC-%D0%B3%D1%80%D0%B0%D0%B6%D0%B4%D0%B0%D0%BD%D1%81%D0%BA%D0%B8%D0%BC-%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%BE%D0%BC.pdf էլեկտրոնային հասանելիությունը 18.11.2023 թ. դրությամբ):

յունքում էլ ծագում են իրավական հետևանքեր: Ի տարբերություն իրավունքների իրականացման սահմանները խախտելուն՝ իրավունքի չարաշահման դեպքում համապատասխան իրավահարաբերությունների սուբյեկտը դրսևորում է օրենքի նպատակին հակասող վարքագիծ: Այլ կերպ ասած՝ իրավունքի չարաշահման դեպքում ոչ թե խախտվում է համապատասխան օրենքը, այլ դրա իրականացումը կատարվում է իրավանորմի նպատակին հակառակ»[1]:

«Իրավունքի չարաշահում եզրույթը՝ «abuse de droit», առաջին անգամ կիրառվել է Ֆրանսիայում»[2]: ««Abuse de droit» եզրույթի անվան հեղինակը բելգիացի Ֆրանսուա Լորանն է, ով առաջին անգամ սուբյեկտիվ իրավունքների անբարեխիղճ իրականացումը բնութագրել է որպես իրավունքի չարաշահում»[3], սակայն իրավացի չի լինի ասել, որ այդ սկզբունքը Ֆրանսուա Լորանն է բացահայտել, քանի որ իրավունքի չարաշահման էությունը անուղղակի կերպով քննարկման առարկա է դարձել դեռևս շատ վաղուց:

«Հռոմեական իրավունքում ընդունված են եղել «qui jure suo utitur, neminem laedit» (այն անձը ով իրացնում է իր իրավունքները, չի կարող իրավախախտ համարվել), «in fraudem legis facit, qui salvis verbis legis, sententiam ejus circumvenit» (անձը շրջանցում է օրենքը, եթե առաջնորդվում է օրենքով, սակայն ոչ դրա նպատակին համապատասխան) և «male jure nostro uti non debemus» (մենք չպետք բացասական իրացնենք մեր իրավունքները) սկզբունքները»[4], ինչը վկայում է իրավունքի չարաշահման եզրույթի՝ դեռևս հին ժամանակներում քննարկված լինելու մասին:

Օրենսգրով և ՀՀ օրենսդրության այլ նորմատիվ իրավական ակտերով չեն սահմանվել իրավունքի չարաշահման հասկացությունը և դեպքերը, այդ պատճառով դատարանները իրավունքի չարաշահումը քննարկման առարկա են դարձնում Օրենսգրքով նախատեսված իրավունքների իրականացման սահմաններից դուրս վարքագիծ դրսևորելու համատեքստում:

«Գերմանիայիում դեռևս 1863 թվականին սաքսոնական քաղաքացիական օրենսգրքի 80-րդ բաժինը օրենքի շրջանցումը դիտարկել է որպես առանձին իրավական ինստիտուտ, սակայն ներկայումս Գերմանիայի Դաշնության քաղաքացիական օրենսգրքում բացակայում է իրավունքի չարաշահման եզրույթի սահմանումը: Նշվածը պայմանավորված է նրանով, որ օրենսդիրը կարծում է՝ «fraus legis» սկզբունքի ներդրման դեպքում դատավորները կսահմանափակվեն իրավունքի չարաշահման եզրույթի մեկնաբանման հարցում, քանի որ դեռևս բականաչափ ուսումնասիրված չէ և հնարավոր չէ որոշակի ու հստակ սահմանում տալ այդ դեպքերին, որը յուրաքանչյուր դեպքում կիրառելի կլինի և հնարավորություն չի տա իրավանորմի չարաշահման դեպքում մնալ անպատիժ»[5]:

Ըստ հայ տեսաբանների՝ «Իրավունքի սուբյեկտն իրավունքներն իրականացնելիս դուրս չի գալիս այդ իրավունքների իրականացման՝ օրենքով թույլատրելի

---

[1] **Basedow J.** Das Verbot von Rechtsmissbrauch und Gesetzesumgehung im europäischen Privatrecht, in: Festschrift für M. P. Stathopoulos, Ant. N. Sakkoulas, Athen, 2010, էջ 161.

[2] **Joseph Perillo,** *Abuse of Rights: A Pervasive Legal Concept*, 27 Pac. L. J. 37, 1995. (chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://core.ac.uk/download/pdf/216957667.pdf էլեկտրոնային հասանելիությունը 19.11.2023թ. դրությամբ):

[3] **Усольцев Е.Ю.** Проблема термина «злоупотребление правом» // Российское право на современном этапе: сборник научных трудов XIV Международной научно-практической конференции, Ростов н/Д., 21 апреля. – М.: Знание-М, 2020. էջ 236

[4] **Поротикова О.А.** Проблема злоупотребления субъективным гражданским правом /– М.: Волтерс Клувер, 2007. էջ 111

[5] **Benecke M.** Gezetzesumgehuhg im Zivilrecht: Lehre und praktischer Fall im allgemein und internationalen Privatrecht. էջ 17 (chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://api.pageplace.de/preview/DT0400.9783161579264_A40000895/preview-9783161579264_A40000895.pdf էլեկտրոնային հասանելիությունը 21.11.2023թ. դրությամբ):

շրջանակից, ապա սուբյեկտիվ իրավունքների չարաշահման կամ իրավունքների սահմանափակման մասին խոսք լինել չի կարող, իսկ եթե սուբյեկտը խախտում է օրենքով նախատեսված սահմանափակումները կամ դուրս է գալիս իր իրավասությունների շրջանակից, ապա թույլ է տալիս իրավունքի չարաշահում»[1]:

«Իրավունքի չարաշահում» եզրույթի տարբերակումը այլ իրավախախտումներից որոշ տեսաբաններ հիմնավորում են նրանով, որ «համապատասխան վարքագիծ դրսևորելու արդյունքում սուբյեկտը թույլ չի տալիս իրավախախտում դրա դասական իմաստով, ինչով էլ տարբերվում է դելիկտային իրավահարաբերություններից»[2]:

Ֆրանսիայում իրավունքի չարաշահման եզրույթը նույնպես քննարկման առարկա է դարձել ինչպես իրավաբան գիտնականների կողմից, այնպես էլ դատական պրակտիկայի շրջանակներում: Ընդ որում, առավել պարզ լինելու միտումով Ֆրանսիայում բավականին հաճախ են համեմատական անցկացնում իրավունքի չարաշահման և քվազիդելիկտային վարքագծի արդյունքում վրա հասնող հետևանքների միջև: Մասնավորապես՝ «որպես երկու իրավահարաբերություններին բնորոշ հատկանիշ առանձնացվում է վրա հասած բացասական հետևանքի՝ վնասի և վերացման/փոխհատուցման պայմանը, իսկ որպես տարբերակիչ՝ քվազիդելիկտային վարքագծի արդյունքում խախտվում է որևէ իրավանորմ, իսկ իրավունքի չարաշահման դեպքում իրավազոր սուբյեկտը վնաս է պատճառում համապատասխան իրավունք վերապահող իրավանորմի շրջանակներում»[3]:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2020 թվականի հոկտեմբերի 8-ին կայացրած թիվ ԵԿԴ/1397/02/11 քաղաքացիական գործով հանգել է հետևյալ եզրակացությանը. «Իրավունքի չարաշահումը թույլատրելի համընդհանուր վարքագծի շրջանակներում իրավունքներն իրացնելիս իրավախախտման հատուկ տեսակ է, որը զուգորդվում է այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ: Այսինքն, իրավունքի չարաշահման պայմաններում իրավախախտողի գործողությունները ձևականորեն հիմնված են վերջինիս պատկանող իրավունքների վրա, սակայն իրականացվում են այնպիսի եղանակներով, որ խախտում են այլ անձանց իրավունքներն ու շահերը: Ըստ այդմ էլ, եթե իրավունքի սուբյեկտն իր իրավունքներն իրացնելիս դուրս չի գալիս այդ իրավունքների իրացման և պաշտպանության համար օրենքով սահմանված թույլատրելի շրջանակներից, ապա իրավունքի չարաշահումը բացակայում է»[4]:

Տեսական գրականության մեջ իրավունքի չարաշահման երկու տեսակ է առանձնացվում.

«ա) իրավունքի չարաշահումը, որը կատարվում է այլ անձանց վնաս պատճառելու ուղղակի մտադրությամբ (շիկանա).

բ) իրավունքի չարաշահումը, առանց այլ անձանց վնաս պատճառելու մտադրության, բայց օբյեկտիվորեն նրանց վնաս պատճառող»[5]:

---

[1] ՀՀ քաղաքացիական իրավունք: Ընդհանուր մաս: Սխեմաներ/ **Շ. Ղուկասյան և ուրիշ**.- Եր.: «Հայրապետ» հրատ., 2023, էջ 46:

[2] **A. N. Yiannopoulos,** Civil Liability for Abuse of Right: Something Old, Something New..., 54 La. L. Rev. 1994, էջ 1195 (chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://digitalcommons.law.lsu.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=5528&context=lalrev էլեկտրոնային հասանելիությունը 10.11.2023 թվականի դրությամբ):

[3] **Vera Bolgár,** Abuse of Rights in France, Germany, and Switzerland: A Survey of a Recent Chapter in Legal Doctrine, 35 La. L. Rev. (1975) էջ 1020 (https://digitalcommons.law.lsu.edu/lalrev/vol35/iss5/4 էլեկտրոնային հասանելիությունը 22.11.2023 թվականի դրությամբ):

[4] ՀՀ վճռաբեկ դատարանի 2020 թվականի հոկտեմբերի 8-ին կայացրած թիվ ԵԿԴ/1397/02/11 քաղաքացիական գործով որոշում:

[5] **Բարսեղյան Տ. Կ.** նշվ. աշխ., էջ 83:

Վերոնշյալի համապարփակ վերլուծությունից բխում է, որ իրավունքի չարաշահման դեպքում համապատասխան սուբյեկտի վարքագիծը հիմնված է վերջինիս պատկանող իրավունքների վրա, որի իրացման ընթացքում պարտադիր պայման է այլ անձանց իրավունքների և օրինական շահի դեմ ոտնձգման փաստի առկայությունը:

Իրավունքի չարաշահման փաստերը հանդիպում են տարբեր ոլորտներում՝ առնչվելով իրավունքի տարբեր ճյուղերի, սակայն առավել տարածված է որպես քաղաքացիական իրավունքի ինստիտուտ: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «կորպորատիվ իրավունք»-ը՝ որպես իրավունքի առանձին ճյուղ, ՀՀ իրավական համակարգում բացակայում է, և դասվում է «քաղաքացիական իրավունք»-ի ենթաճյուղերի շարքին, ուստի «քաղաքացիական իրավունք»-ի իրականացման սկզբունքները տարածվում են նաև կորպորատիվ իրավահարաբերությունների վրա:

Նշվածը բխում է նաև կորպորատիվ իրավունքի և քաղաքացիական իրավունքի փոխկապակցվածությունից, քանի որ առևտրային ընկերությունները գործում են Օրենսգրքին և հարակից օրենքներին համապատասխան: Մասնավորապես, Օրենսգրքով նախատեսված, քաղաքացիական իրավունքը կարգավորող սկզբունքները, պայմանագրային իրավահարաբերությունները, պատասխանատվության վրա հասնելն և նմանատիպ այլ իրավահարաբերություններ մասամբ կարգավորվում են նաև այնպիսի նորմատիվ իրավական ակտերով, ինչպիսին են՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը և այլն:

Ուստի ստացվում է, որ քաղաքացիական իրավունքին բնորոշ երաշխիքները, պաշտպանության միջոցները և սահմանափակումները հավասարապես կիրառելի են կորպորատիվ գործունեության համատեքստում, միաժամանակ հաշվի առնելով իրավահարաբերությունների առանձնահատկությունները:Կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների իրականացման դրսևորման ձև է քաղաքացու կամ կազմակերպության կողմից իրեն օրենքով վերապահված հնարավոր վարքագիծը, որն ուղղված է նրանց շահերի բավարարման հետ կապված նպատակի իրականացմանը:

Կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների այս դրսևորումն ընդգծում է կորպորատիվ գործունեության դինամիկ բնույթը, որտեղ ֆիզիկական անձինք և/կամ ընկերությունները իրացնում են օրենսդրի և/կամ կանոնադրությամբ վերապահված իրավունքները դրա նպատակին համապատասխան և ուղղված են համապատասխան իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեության նպատակին (կորպորատիվ նպատակին) հասնելուն:

Կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակից հանդիսացող իրավաբանական անձանց իրավունքները ներառում են գործունեության լայն շրջանակ. չսահմանափակվելով պայմանագրերի կնքման, գույքի ձեռքբերման և օտարման, առևտրային գործարքների մեջ ներգրավվելու և իրավունքների կամ պարտականությունների խախտման համար իրավական պաշտպանության միջոցների հետապնդման մեջ և այլն:

Միաժամանակ, կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքներով օժտված են լինում կորպորացիաների անունից հանդես եկող անձինք, ինչպիսիք են տնօրենները, խորհրդի անդամները, բաժնետերերը և այլք, ովքեր նույնպես ունեն տարբեր նորմատիվ իրավական ակտերով կամ կանոնադրությամբ իրենց վերապահված իրավունքներ:

Կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքների իրականացման նկատմամբ սահմանափակումների կիրառումը նպատակ ունի կանխելու իրավաբանական անձանց կողմից իրենց բիզնես գործունեության վարման ընթացքում

հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումները և պաշտպանելու իրավահարաբերության մասնակից հանդիսացող սուբյեկտների իրավունքները:

Ըստ Վ. Դ. Ավետիսյանի՝ «Կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահում է համարվում՝ կորպորատիվ իրավահարաբերություններում մասնակցի կողմից իրեն պատկանող իրավունքների և օրինական շահերի իրականացումը, որի արդյունքում երրորդ անձանց պատճառվում է վնաս, նման գործողությունների կատարումն ակնհայտորեն անհամաչափ է իրավունքներն ու օրինական շահերն իրացնող անձի անձնական շահին, օրենքի ոգուն և հակասում է իրավահարաբերությունների կարգավորման բարի կամքի և ազնվության սկզբունքներին»[1]:

Ժամանակակից դատական պրակտիկայի վերլուծությունը վկայում է կորպորատիվ բնույթի վեճերի, այդ թվում կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման դեպքերի քանակական աճի մասին. շատացել են այն դատական ակտերը, որոնցով բնութագրվում են կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշումը և իրավունքի չարաշահման դեպքի հաստատման համար անհրաժեշտ վավերապայմանները:

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի մայիսի 27-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած վճռով արձանագրել է՝

«Իրավունքի չարաշահման դեպքում պետք է միաժամանակ առկա լինեն հետևյալ հատկանիշները՝

1. իրավունքը չարաշահողը պետք է օժտված լինի համապատասխան սուբյեկտիվ իրավունքով,

2. իրավունքի չարաշահման դեպքում անձն առերևույթ իրացնում է իր սուբյեկտիվ իրավունքը,

3. իրավունքի չարաշահման դեպքում իրավունքը կրողն իր սուբյեկտիվ իրավունքն իրացնում է ոչ նպատակային»[2]:

Նույն գործով ՀՀ վերաքննիչ դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 6-ին կայացրած և օրինական ուժ ստացած որոշմամբ, համաձայնվելով իրավաբան գիտնական Վ. Դ. Ավետիսյանի աշխատություններից մեկով թվարկված[3]՝ կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման դեպքերի հետ, առանձնացրել է կորպորտիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման դեպքերը ըստ չարաշահման ձևի՝

- Իրավահարաբերության մասնակիցն իրավունքն իրականացնում է (գործողությունները կատարում է) գլխավորապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ,
- բացակայում է իրավունքի իրականացման (գործողության կատարման) համար անհրաժեշտ հիմնավոր կամ օրենսդրական շարժառիթ,
- իրավունքի իրականացումը (գործողության կատարումը) հակասում է հանրային բարքերին (բարոյական նորմերին), բարի կամքի և ազնվության սկզբունքին,
- իրավունքն իրականացվում է (գործողությունը կատարվում է) այդ իրավունքի իրականացման համար օրենքով ամրագրված նպատակին հարկադիր կերպով»[4]:

---

[1] **Ավետիսյան Վ.Դ.** Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), դոկտորական ատենախոսություն. ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2013, էջ 386:

[2] ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մայիսի 27-ին թիվ ՍԴ/1766/02/21 քաղաքացիական գործով որոշում:

[3] Առավել մանրամասն տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** նշվ.աշխ., էջ 387-388:

[4] ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 6-ին թիվ ՍԴ/1766/02/21 քաղաքացիական գործով որոշումը:

Կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների իրականացման գործընթացը շատ բազմաբովանդակ ու բամբաբնույթ է, և բավականին խնդրահարույց հարց է, թե արդյո՞ք անձը իրացնում է օրենսդրի կողմից իրեն վերապահված իրավունքները դրա նշանակությանը համապատասխան՝ առաջնորդվելով իր իրավունքների իրականացման ազատության սկզբունքով, թե՞ իրավունքները իրացվում են ոչ նպատակային, թերևս վերոնշյալով և օրենսդրությամբ «իրավունքի չարաշահում» եզրույթին որոշակի հստակ սահմանում տրված չլինելու պատճառով է, որ դատարանները շատ հաճախ խուսափում են անձանց իրավունքների իրացումը որակել որպես իրավունքի չարաշահում:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցների կողմից իրենց սուբյեկտիվ իրավունքների իրականացման ընթացքում չարաշահման դրսևորումներին իրավական գնահատական տալու անհրաժեշտությունը դարձել է առավել արդիական, քան երևէ, ինչը պայմանավորված է նաև տնտեսական հարաբերությունների զարգացման արդի միտումներով:

Ուստի անհրաժեշտ է կորպորատիվ իրավահարաբերությունների էության ուսումնասիրման միջոցով բացահայտել կորպորացիաների և դրա մասնակիցների կողմից դրսևորվող վարքագծի առանձնահատկությունները, ինչը հնարավորություն կընձեռի տարբերակիչ չափանիշների հիման վրա սահմանել կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման հասկացությունը:

Արդեն իսկ կատարված վերլուծության արդյունքում որպես կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումը բնութագրող հատկանիշներ կարող են առանձնացվել հետևյալ չափանիշները՝

- Կորպորատիվ հարաբերության մասնակիցը իր սուբյեկտիվ իրավունքն իրացնում է օրենքով նախանշված ձևական-իրավական սահմաններում, սակայն ոչ նպատակային կամ այդ իրավունքի նպատակին հակառակ,
- Կորպորատիվ հարաբերության մասնակիցը իր սուբյեկտիվ իրավունքն իրացնում է երրորդ անձանց վնաս պատճառելու մտադրությամբ, կամ անկախ նման մտադրությունից այդ վնասը պատճառվում է իրավունքը ոչ նպատակային իրացնելու արդյունքում,
- Կորպորատիվ հարաբերության մասնակիցը իր սուբյեկտիվ իրավունքն իրացնում է օրենքին չհակասող, սակայն այլ անձանց իրավունքները և օրինական շահերը խախտող եղանակով:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 05.05.1998 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.1999, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50)): (RA Civil Code (adopted on 05.05.1998, entered into force on 01.01.1999, source: 1998.08.10/17(50)):

2. ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 28-ին կայացրած թիվ ՍԴՈ-980 որոշում: (Resolution No. SDO-980 issued by the RA Constitutional Court on October 28, 2016):

3. ՀՀ վճռաբեկ դատարանի 2020 թվականի հոկտեմբերի 8-ին կայացրած թիվ ԵԿԴ/1397/02/11 քաղաքացիական գործով որոշում: (Decision of the RA Court of Cassation on October 8, 2020 in the civil case No. EKD/1397/02/11.):

4. ՀՀ վերաքննիչ դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 6-ին թիվ ՍԴ/1766/02/21 քաղաքացիական գործով որոշումը (The RA Court of Appeals decision on October 6, 2022 in civil case No. SD/1766/02/21.):

5. ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մայիսի 27-ին թիվ ՍԴ/1766/02/21 քաղաքացիական գործով որոշում: (On May 27, 2022, the Court of General Jurisdiction of the Syunik Marz, RA, on May 27, 2022, decided on civil case No. SD/1766/02/21.):

6. Ավետիսյան Վ.Դ. Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2013: (Avetisyan V.D. Contemporary issues of corporate legal relations in the Republic of Armenia (on the example of economic companies), doctoral dissertation. YSU Publishing House, Yerevan 2013.):

7. Բարսեղյան Տ. Կ. ՀՀ քաղաքացիական իրավունք: Առաջին մաս (չորրորդ հրատարակություն): – Երևանի պետ. համալս.-Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2014: (Barseghyan T. K. RA civil law. First part. (fourth edition). - Head of Yerevan University - Yer. "Tigran the Great" ed., 2014.):

8. Շ. Ղուկասյան և ուրիշ.: ՀՀ քաղաքացիական իրավունք: Ընդհանուր մաս: Սխեմաներ/ - Եր.: «Հայրապետ» հրատ., 2023: (Sh. Ghukasyan and others. RA civil law. General part. Schemes/ - Er.: "Hayrapet" ed., 2023.):

9. Грибанов В. П. Осуществления и защиты гражданских прав. М., 2001: (Gribanov V.P. implementation and protection of civil rights. M., 2001.:):

10. Поротикова О.А. Проблема злоупотребления субъективным гражданским правом /– М.: Волтерс Клувер, 2007: (Porotikova O.A. The problem of abuse of subjective civil law / – M.: Wolters Kluwer, 2007:):

11. Сазанова, И. В. Злоупотребление субъективным гражданским правом: монография / – Южно-Сахалинск: СахГУ, 2009. (Sazanova, I. V. Abuse of subjective civil law: monograph / - Yuzhno-Sakhalinsk: SakhSU, 2009.):

12. Усольцев Е.Ю. Проблема термина «злоупотребление правом» // Российское право на современном этапе: сборник научных трудов XIV Международной научно-практической конференции, Ростов н/Д., 21 апреля. – М.: Знание-М, 2020: (Usoltsev E.Yu. The problem of the term “abuse of law” // Russian law at the present stage: collection of scientific papers of the XIV International Scientific and Practical Conference, Rostov n/D., April 21. – M.: Knowledge-M, 2020:):

13. A. N. Yiannopoulos, Civil Liability for Abuse of Right: Something Old, Something New..., 54 La. L. Rev. 1994:

14. Basedow J. Das Verbot von Rechtsmissbrauch und Gesetzesumgehung im europäischen Privatrecht, in: Festschrift für M. P. Stathopoulos, Ant. N. Sakkoulas, Athen 2010:

15. Benecke M. Gezetzesumgehuhg im Zivilrecht: Lehre und praktischer Fall im allgemein und internationalen Privatrecht:

16. Joseph Perillo, Abuse of Rights: A Pervasive Legal Concept, 27 PAC. L. J. 37, 1995:

17. Vera Bolgár, Abuse of Rights in France, Germany, and Switzerland: A Survey of a Recent Chapter in Legal Doctrine, 35 La. L. Rev. (1975):

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА ЗЛОУПОТРЕБЛЕНИЙ ПРАВОМ В КОРПОРАТИВНЫХ ПРАВООТНОШЕНИЯХ

Мартин Хачикян
Аспирант кафедры Гражданского права ЕГУ
Старший юрист ООО «БИЭЛСИ ГРУП», адвокат

В статье рассматриваются особенности применения одного из основополагающих принципов гражданского права Республики Армения запрета злоупотребления правами в контексте корпоративных правоотношений. В частности, проведено теоретическое и практическое исследование термина «злоупотребление правом» путем сравнения его с другими правовыми институтами, регулирующими корпоративные правоотношения.

Термин «злоупотребление правом» как таковой законодательством Республики Армения не определен, а в корпоративных правоотношениях определение действительных условий, необходимых для выявления факта злоупотребления правом в поведении субъектов, остается на усмотрение субъектов. суды по каждому делу.

Необходимость дать правовую оценку проявлениям злоупотреблений со стороны участников корпоративных правоотношений при реализации своих субъективных прав стала как никогда актуальной, что обусловлено и современным периодом развития мирохозяйственных отношений. Более того, анализ судебной практики также свидетельствует о количественном росте случаев злоупотребления правами в корпоративных правоотношениях, в том числе по спорам корпоративного характера.

Отсутствие четкого определения термина «злоупотребление правами» в действующих правовых нормах привело к необходимости выявить его объективные критерии и действительные условия и закрепить их в законодательстве, в связи с чем в статье выделяются критерии признаков, характеризующих злоупотребление правами в корпоративных правоотношениях.

GENERAL CHARACTERISTICS OF ABUSE OF RIGHT IN CORPORATE LEGAL RELATIONS

Martin Khachikyan
PhD student at the YSU Chair of Civil Law
“BLC GROUP” LLC senior associate, attorney

The article discusses the features of the application of one of the fundamental principles of civil law of the Republic of Armenia, the prohibition of abuse of rights, in the context of corporate legal relations. In particular, a theoretical and practical study of the term "abuse of rights" was carried out by comparing it with other legal institutions regulating corporate legal relations.

The term "abuse of right" is not defined as such by the legislation of the Republic of Armenia, and in corporate legal relations, the definition of valid conditions necessary to identify the fact of abuse of right in the behavior of subjects is the discretion of the courts for each case.

During the exercise of their subjective rights by the participants of corporate legal relations, the need to give a legal assessment to the manifestations of abuse has become more relevant than ever, which is also due to the current period of development of global economic relations. Moreover, the analysis of judicial practice also indicates the quantitative increase in cases of abuse of rights in corporate legal relations, including disputes of a corporate nature.

The absence of a clear definition of the term "abuse of rights" by the current legal regulations has led to the need to reveal its objective criteria and valid conditions and establish them in legislation, due to which the criteria of features characterizing the abuse of rights in corporate legal relations have been distinguished in the article.

Բանալի բառեր– *իրավաբանական անձ; չարաշահում; իրավունքի չարաշահում; իրավունքների իրականացման սահմաններ; իրավունքի ինքնապաշտպանություն; կորպորատիվ կառավարում; կորպորատիվ բախումներ; կորպորատիվ իրավունք:*
Ключевые слова: *юридическое лицо; злоупотребление; злоупотребление правами; пределы осуществления прав; самозащита прав; корпоративное управление; корпоративные конфликты; корпоративное право.*
Key words: *legal entity; abuse; abuse of rights; limits of exercise of rights; self-defense of rights; corporate governance; corporate conflicts; corporate law.*